ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՍՑԵ,ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ _ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 25

# ՈՐՈՇՈՒՄ

« 16 » հունվարի 2017 թվականի N_ 3_

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով,ՀՀ Կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Մարտունի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

ՀՀ կառավարության 11.03.2004թ. թիվ 296-Ն որոշմամբ հաստատված Մարտունի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել հետևյալ փոփոխությունը:

3.1.Հիմք ընդունելով համայնքների բնակավայրերի տարածքներում և բնակավայրերի տարածքներից դուրս գտնվող բջջային կայանների տեղակայման վայրերի հողերի նպատակային նշանակությունները համապատասխանեցնելու վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 18.12.2014թ. N 01/16/6841-14 հանձնարարականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ գլխի 14-րդ և 16-րդ հոդվածների պահանջներով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի 0.02հա արոտավայրի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ բջջային կայան տեղադրելու համար:

3.2 Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

Քվեարկության արդյունքներն են

Կողմ / 5 / Դեմ / 0 / Ձեռնպահ / 0 /

ԱՐԹՈՒՐ ՄԻՐԶՈՅԱՆ
ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՈՎԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ